ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

20

Հաստատում եմ՝

Ռեկտոր Ա. Ա. Իկիլիկյան

« » _____ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ակադեմիական ազնվությունը ակադեմիական աշխատանքի նկատմամբ հարգանքն է և մտավոր սեփականության որոշակիացումը, ճանաչումն ու պաշտպանությունը:

1.2. Ակադեմիան հետևում է ակադեմիական անազնվության սկզբունքներին և իրազեկում ակադեմիական ազնվության խախտման հետևանքների վերաբերյալ:

1.3. Ակադեմիական անազնվությունը վստահության չարաշահում է, որևէ աշխատանք իրականացնելիս ուսանողների պարագայում՝ քննության ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների անօրինական օգտագործումը, դասախոսի կողմից ուսանողի ոչ օբյեկտիվ գնահատումը, այլ դասընթացի շրջանակներում արդեն ներկայացված աշխատանքը առանց դասավանդողի իմացության ներկայացնելը:

1.4. Ակադեմիական ազնվության կարգը ուղղված է ակադեմիայի վարչական դասախոսական անձնակազմի, ինչպես նաև ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

2. Ակադեմիական անազնվության կարգի նպատակները

2.1. Ապահովել Ակադեմիայի աշխատակազմի համարարդարության և ազնվության մթնոլորտ

2.2. Ապահովել կրթության բարձր որակ

2.3. Վեր հանել և ապահովել ակադեմիական ազմվությանը նպաստող բոլոր խնդիրները, պահանջները և պայմանները

2.4. Կանխարգելել ակադեմիական անազնվության երևույթները ՄՈՒՀ-ում:

3. Ակադեմիական ազնվության հսկման ընթացակարգ

3.1. ՄՈՒՀ-ի պրոռեկտորը, յուրաքանչյուր նոր աշխատակցի և ուսանողի ներկայացնում է ակադեմիական անազնվությանը բնորոշող վարքային դրսևորումները, որոնք կարող են չարաշահել ՄՈՒՀ-ի կրթական համայնքի վստահությունը և զգուշացնում, որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:

3.2. Ակադեմիական ազնվության խախտման դեպքում տրվում են նզրավոր նկատողություններ, որոնցում հստակ նկարագրվում է խախտումը:

3.3. Յուրաքանչյուր գրավոր նկատողության ներքևում ստորագրում է խախտում կատարած անձը:

4. Ակադեմիական անազնվության դրսևորումներ

4.1.Այլ անձանց կողմից կատարված հետազոտությունները, մտքերը, կարծիքները որպես սեփականը ներկայացնելը կամ առանց հղումների դրանք օգտագործելը:

4.2.Գաղտնի համաձայնության գալը մի խումբ անձանց հետ

4.3.Ստուգողական և քննական աշխատանքների վերաբերյալ ինֆորմացիայի տեղեկատվության տարածումը

4.4.Ուսումնառողի փոխարեն ստուգողական կամ քննական աշխատանքների կատարում

4.5.Ուսումնառողների ստուգողական կամ քննական աշխատանքների փոխանակումը

4.6.Փաստաթղթերի, ուսումնական նյութերի կեղծում, դրանց անօրինական օգտագործում, վնասում, ստորագրությունների կեղծում

4.7.Տեղեկավական աղբյուրների քողարկում, քննությունների ընթացքում անթույլատրելի միջոցների օգտագործու, հուշարարություն, արդյունքների խեղաթյուրում

5. Պատժամիջոցներ ակադեմիական անազնվության դեպքում

5.1.Յուրաքանչյուր ակադեմիական անազնվության յրացահայտման դեպքում, տվյալ խախտումը համարվում է անվավեր, կանխարգելվում է դրա ստեղշման և տարաշման ընթացքը:

5.2.Ընթացիկ քննությունների կամ ամփոփիչ ատեստավորման ժամանակ, ակադեմիական ազնվության խախտման դեպքում ուսումնառողը ստանում է նվազագույն միավոր: Ուսումնառողը ենթակա է վերաքննության: